ISSN 2953-805X

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina*

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ 7

Միհրան Գալստյան
Մնա՞լ, թե՞ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ 8

Լուսինե Տանաջյան
Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր 24

Սոնա Ներսիսյան
Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում 37

Սյուզաննա Բարսեղյան
Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում 49

II. ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ 65

Գայանե Հակոբյան
«Հալեպի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել 66

Գարիկ Աթանեսյան
Աուտենտիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում 78

Արմինե Տիգրանյան
Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հադրութի շրջանի օրինակով) 89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ 113

Ռոբերտ Օհանջանյան
Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում 114

Լուսինե Անգեղուշ
Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում 124

Մակիչ Վարդանյան
Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը 139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ 157

Սվետլանա Պողոսյան
Հազուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ 158

Հասմիկ Աբրահամյան
Ռոման Հովսեփյան
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապտույտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի) 174

V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 189

Ռոբերտ Կարապետյան
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը 190

Նարե Գալստյան
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում 204

Նելլի Խաչատրյան
Սալվինե Մարկոսյան
Մարիամ Հարությունյան
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա) 218

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ 237

Հռիփսիմե Ասատրյան
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ 238

VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 247

Հայկազեան հայագիտական հանդէսի 2022 տարուան զոյգ գիրքերը 248

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 263

IV

ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ

DOI: 10.54503/2953-805X-2024.6-174

Համլիկ Աբրահամյան, *պ.գ.թ.*
ՀԱԻ

Ռոման Հովսեփյան, *կ.գ.թ.*
ՀԱԻ

ՈՒՏԵՍՏԻ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴԵՐԸ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԾՐՁԱՊՏՈՒՅՏՈՒՄ (ՆԱԽՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ՝ ԸՍՏ ՍՅՈՒՆԻՔԻՑ ԳՐԱՌՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ)[1]

Համաշխարհայնացման գործընթացների համատեքստում էթնիկ ինքնությանն առնչվող տարաբնույթ խնդիրները մշտապես գտնվում են հետազոտողների դիտակետում: Այդ խնդիրների շարքում մեծ հետաքրքրություն են ներկայացնում միգրանտների շրջանում էթնիկ ինքնության դրսևորման ձևերը, որոնցից է միգրանտների կողմից ուտեստի տեղափոխումն ընդունող երկիր: Այս երևույթը կայուն զարգացման միտում է արձանագրում և որպես արդիական գործընթաց՝ հետազոտության լայն դաշտ է բացում: Սույն հոդվածի նպատակն է՝ առաջին անգամ Սյունիքի օրինակով ներկայացնել ծագման երկրի սննդամթերքի միգրացիան (գաղթը)՝ առաջնորդվելով հետևյալ խնդիրներով. ինչ ուղիներով են վայրի ուտելի բույսերը, գյուղական արտադրության սննդամթերքը կամ դրանց հումքը հայտնվում և ճանաչելի դառնում միգրանտի հանգրվանած երկրում, ինչ վայրի բույսեր և գյուղական արտադրության սննդամթերք են տարվում, օգտագործման ինչ նպատակներով են տարվում, և հարակից այլ հարցեր:

Հոդվածում օգտագործված դաշտային նյութերը գրառվել են 2021-2022 թթ. Սյունիքի մարզի Գորիայք, Սիսիան, Գորիս, Տեղ, Կապան, Մեղրի խոշորացված համայնքների տասնհինգ բնակավայրերում անցկացված ազգագրական և էթնոկենսաբանական հետազոտությունների ընթացքում՝ խմբային և անհատական խորացված հարցազրույցների, ինչպես նաև հերբարիումային հավաքների մեթոդների կիրառմամբ:

Հիմնաբառեր՝ Սյունիք, վայրի ուտելի բույսեր, ուտեստ, սննդամթերք, միգրացիա/գաղթ, էթնոմշակութային, էթնիկ ինքնություն:

Ներածություն

Հայտնի է, որ *միգրացիան* (գաղթը) նպաստում է մշակութային մի շարք տարրերի, այդ թվում՝ ուտեստի ներթափանցմանը և տարածմանը նոր միջավայրերում: Ապաստանած երկրում *միգրանտի* կապվածությունն ավանդական ուտեստին բացատրվում է նաև նրա բնօրրան երկրի սոցիալ-մշակութային միջավայրի հետ շոշափելի կապի պահպանման հոգեբանական անհրաժեշտութ-

1 Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ 20TTSH-053 «Բնական բուսական ռեսուրսների օգտագործումը Սյունիքում. ավանդույթները, ժամանակակից միտումները և հեռանկարները» գիտական նախագծի շրջանակում:

յամբ, քանի որ ուտեստը նյութական մշակույթի՝ էթնիկ ինքնությանը սերտորեն առնչվող բաղադրիչներից է: Հայ միգրանտների կյանքում ուտեստի միջոցով էթնիկ ինքնության դրսևորման և պահպանման դերին անդրադարձել են հայ և օտարազգի հետազոտողներ: Օրինակ՝ ուտեստի՝ որպես էթնիկ ինքնության դրսևորման կարևոր բաղադրիչ լինելու համատեքստում, Երևանի և Գյումրու օրինակներով, քննարկվում է հիմնականում Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Ռուսաստանի Դաշնություն ուտեստի ուղեբեռներ ուղարկելու պրակտիկան[2]: Ժենգյալով հացին նվիրված մի հետազոտությամբ ներկայացվում են «Արցախյան խոհանոցի բրենդ» և ենթաէթնիկ մշակույթի տարր ժենգյալով հացը 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին որպես Արցախի խորհրդանիշ օգտագործելու և դրա միջոցով Արցախի հետ համերաշխությունը ցույց տալու երևույթները[3]: Մեկ այլ աշխատանքում ցույց է տրվում, որ հայկական համայնքներում էթնիկ ինքնության պահպանման հարցում էթնիկ մշակույթի դրսևորումների շարքում կարևորվում է նաև ուտեստի դերը[4]:

Տարբեր ժողովուրդների մեջ պատմական լայն ժամանակահատվածում (վերջին մի քանի հարյուրամյակ) խնդրի ուսումնասիրությամբ պարզվել է, որ մարդկանց և ուտելի բույսերի միջև դինամիկ հարաբերությունների փոփոխությունը մեծապես կախված է այն բանից, թե որքանով է մարդկանց տվյալ խումբը կապված իր սկզբնական մշակութային ինքնությանը: Եթե նախապատմական ժամանակաշրջանում մարդու հետաքրքրվածությունը բույսերով պայմանավորված էր դրանք՝ որպես ապրուստի միջոց օգտագործելու անհրաժեշտությամբ, ապա մեր օրերում միգրանտի համար ուտելի բույսերը կապվում են նաև ինքնության հետ[5]: Ուտեստի և ինքնության կապի ակտիվ դրսևորումը համատարած երևույթ է և դրսևորվում է տարբեր էթնիկ հանրույթների՝ առավելապես գաղթի և/կամ բռնի տեղահանության համատեքստում[6]:

Մեթոդաբանությունը

Հետազոտությունը հիմնված է հիմնականում 2021-2022 թթ. Սյունիքի մարզի ութ խոշորացված համայնքներից վեցի տասնհինգ բնակավայրերում անցկացրած ազգագրական հետազոտությունների արդյունքների վրա[7]՝ Գորհայք խ/հ (գ. Ծղուկ), Սիսիան խ/հ (ք. Սիսիան, գ. Ույծ, Ախլաթյան, Բռնակոթ), Գորիս խ/հ (ք. Գորիս, գ. Վերիշեն, Ակներ, Քարահունջ), Տեղ խ/հ (գ. Տեղ, Քարաշեն), Կապան խ/հ (գ. Ծավ, Դավիթ-Բեկ, Անտառաշատ), Մեղրի խ/հ (գ. Շվանիձոր): Հետազոտությունն իրականացվել է խորացված հարցազրույցների (17 հարցազրույց, որոնց մասնակցել է ընդհանուր թվով 23 տեղեկատու անձ) և

2 Տե՛ս Ծատուրյան 2010, 20-29; Цатурян, 2015, 113-134.

3 Ծատուրյան, Հովսեփյան 2021, 305-326; տե՛ս նաև Tsaturyan, 2015, 142-172.

4 Գալստյան 2023, 273:

5 Hanazaki et al. 2023:

6 Hanazaki et al. 2023:

7 Դաշտային աշխատանքներին մասնակցել են նաև մեր հետազոտական թիմի գործընկերներ Նինա Ստեփանյան-Ղանդիլյանը, Անի Սարատիկյանը և Ռաֆիկ Գաբրիելյանը:

դիտման մեթոդներով: Հարցազրույցների նյութերը սղագրվել են և ենթարկվել բովանդակային վերլուծության: Հարցազրույցները կոդավորված են ըստ ամսաթվի և օրվա հերթական համարի[8]):

Ազգագրական հետազոտություններին զուգահեռ՝ կատարվել են էթնոբուսաբանական հետազոտություններ, մասնավորապես՝ վերցվել են օգտագործվող բույսերի նմուշներ, պատրաստվել են *հերբարիում*ներ (ըստ բուսաբանական մեթոդների՝ փաթեթավորված և անհրաժեշտ տվյալներով պիտակավորված բուսական նմուշների հավաքածուներ), որոնք հետագայում նույնականացվել են[9], այսինքն՝ պարզվել են դրանց կենսաբանական կարգաբանական տեսակային պատկանելությունները: Դաշտային հետազոտական աշխատանքների տվյալները համադրված են հրատարակված աղբյուրներին[10]:

Հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը

Հայտնի է, որ ուտեստը կամ դրա բաղադրիչները ենթարկվում են ոչ միայն արտաքին, այլև ներքին *միգրացիայի*, երբ այն Հայաստանի որևէ բնակավայրից ուսման, աշխատանքի կամ ամուսնության նպատակներով մեկ այլ բնակավայր տեղափոխված անձը կամ ընտանիքը տանում է նոր բնակավայր՝ կատարելով ենթաէթնիկ ինքնության դրսևորման գործառույթ[11]: Մեզ հանդիպած օրինակներում Սյունիքում լայն տարածում ստացած վայրի ուտելի բույսերը, գյուղական արտադրության սննդամթերքը և ուտեստները կամ դրանց հումքը ներքին գաղթի շնորհիվ հիմնականում տեղափոխվում են Գորիս, Կապան, Երևան: Այս ներքին գաղթը ևս շատ տարածված է, սակայն սույն հոդվածում անդրադառնում ենք միայն արտաքին գաղթին:

Հոդվածի նպատակն է՝ Սյունիքի օրինակով ներկայացնել՝ 1) ի՞նչ ուղիներով են վայրի ուտելի բույսերը, գյուղական արտադրության սննդամթերքը կամ դրանց հումքը հայտնվում միգրանտի հանգրվանած երկրում, 2) ի՞նչ ճանապարհներով են ճանաչելի դառնում միգրանտի հանգրվանած երկրում, 3) ի՞նչ վայրի բույսեր և գյուղական արտադրության սննդամթերք է տարվում, օգտագործման ի՞նչ նպատակներով են տարվում, ո՞ր երկրներ են տարվում, ի՞նչ եղանակով են տարվում և հարակից այլ հարցեր:

---

8 Օրինակ՝ 210803-9ab, որտեղ 21-ը տարեթիվն է, 08-ը՝ ամիսը, 03-ը՝ ամսաթիվը, 9-ը՝ օրվա հերթական հարցազրույցի համարը: Վերջինիս կողքին նշված յուրաքանչյուր տառ մատնանշում է խմբային հարցազրույցին մասնակցած բանասացներից մեկին:

9 Նույնականացման աշխատանքները կատարել են հիմնականում ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի գիտաշխատող Անուշ Ներսեսյանը և հոդվածի համահեղինակ Ռոման Հովսեփյանը:

10 Հարկ է նշել, որ ուտեստի տարածումը միգրացիայի (գաղթերի) միջոցով լայնորեն տարածված երևույթ է, և մեր աշխատանքային խմբի անդամներն արձանագրել են Սյունիքում 2017-ին մեկնարկած և մինչ օրս շարունակվող աշխատանքների ընթացքում:

11 Ուշագրավ է, որ ուտեստի ենթաէթնիկ ինքնության դրսևորման երևույթն առկա է նաև երրորդ հանրապետության շրջանում Հայաստան տեղափոխված իրանահայերի շրջանում: Վերջիններս իրենց քիմքին հարազատ սննդի զանազան տեսակները հաճախ ձեռք են բերում Իրանում բնակվող ազգական-բարեկամներից (տե՛ս Ծատուրյան 2007, 177):

1) Ուտեստի և սննդամթերքի գաղթը Սյունիքից մինչև ՌԴ, Արևմտյան Եվրոպա և ԱՄՆ

Վայրի ուտելի բույսերը և գյուղական արտադրության սննդամթերքը (նաև՝ խմիչքներ և համեմունքներ) հայտնվում են միգրանտի հանգրվանած երկրում տարբեր ուղիներով.

Ամենապարածվածն այն է, որ երբ միգրանտն արտագաղթելիս կամ հետագայում ժամանակ առ ժամանակ հայրենիք այցելելիս իր նախընտրած սննդամթերքից կամ ուտեստից հետը տանում է: Այս օրինակները գրանցել ենք Ծղուկում (h/թ 210803-2, կին, 65 տ.), Վերիշենում (h/թ 210803-9ab, կանայք՝ 65 և 38 տ.), Քարահունջում (h/թ 210804-5c, կին, 65 տ., h/թ 210804-1+2a, կին, 74 տ.), Քարաշենում (h/թ 210805-2e, կին, 24 տ.), Սիսիանում (h/թ 210808-1b, կին, 70 տ.), Տեղում (h/թ 220516-5, կին, 54 տ.), Ծավում (h/թ 220707-1a, կին, 38 տ.), Ախլաթյանում (h/թ 220712-3a, կին, 41 տ.), Դավիթ Բեկում (h/թ 220708-6ab, տղամարդ, 71 տ., կին, 42 տ.):

Քարահունջեցի մի զրուցակից, որ որդու ընտանիքի հետ բնակվում է ՌԴ-ում և գյուղ էր եկել դստերը և այլ հարազատների տեսության, պատմեց, որ Սուրբ Ծնունդյանը և Զատկին քաղցր փլավ (չամչով և չրերով փլավ – Հ.Ա.) է եփում. «*Չէ, Զատիկին էլ եմ պատրաստում, Նոր տարուն էլ: … Տղաս էլ ա շատ սիրում: … Դե, Նոր տարին ամսի 6-ին արդեն Սուրբ Ծնունդ ա, չէ՞: Անպայման էդ գինին, ձուկ ա, վոբշչում, փլավը, հա: … Ճիշտ ա, Զատիկը իրանց հետ ենք անում (նկատի ունի Ռուս ուղղափառ եկեղեցու տոնացույցով), բայց մերն էլ ենք անում: Դե, մերը առաջ ա մեկ օր, բայց մերը էլի անպայման: … Դե, ձուն ներկում ես, փլավ ես անում, գինի ես տյինում, տենց բաներ անում ենք*» (Քարահունջ, 210804-5c, կին, 65 տ.): Մեր զրուցակիցն ասաց, որ պատրաստում է Քարահունջում ընդունված բաղադրատոմսով: Այսպիսով, ուտեստը՝ որպես տոնածիսական մշակույթի անքակտելի տարր, շարունակում է դրսևորվել նաև միգրանտի ընդունող երկրում:

Ուտեստի միգրացիայի մեկ այլ տարբերակ է, երբ հայրենիքում բնակվող ընտանիքի անդամները, ազգական-բարեկամները արտերկրում գտնվողին պարբերաբար ուղարկում են: Այս օրինակները գրանցել ենք Բոնակոթում (h/թ 210806-5a, կին, 72 տ.), Վերիշենում (h/թ 210803-9a, b, կանայք, 65 տ. և 38 տ.), Տեղում (h/թ 220516-5, կին, 54 տ.), Ակներում (h/թ 220517-7a, կին, 74 տ.), Ծավում (h/թ 220707-3a, կին, 71 տ.):

Միգրանտին ուտեստի փաթեթներ ուղարկելու ավանդույթը կա նաև Հայաստանի էթնիկ փոքրամասնությունների շրջանում: Եզդիներն ու քրդերը Հայաստանի «գաղթող մթերքների» շարքից «սարերի բույսերի» կամ որ նույնն է՝ վայրի բույսերի փաթեթներ են ուղարկում արտերկրում (ՌԴ, Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Նիդեռլանդներ, Բելգիա և այլ երկրներ) բնակվող իրենց հարազատներին[12]:

Հայրենիքում ապրողները միգրանտին արտերկիր այցելելիս իրենց հետ տանում են տեղական սննդամթերքից: Նմանօրինակ նյութեր գրանցել

12 Hovsepyan et al. 2016, 32-41.

ենք Վերիշենում (h/թ 210803-9a, կին, 65 տ.), Ծավում (h/թ 220707-3a, կին, 71 տ.):

Ակնհայտ է, որ վերը նշված վերջին երկու տարբերակում ուտեստը ոչ միայն կատարում է էթնիկ ինքնությունը դրսևորելու գործառույթ, այլև դառնում է ծննդավայրի և ընտանիքի ու հարազատների հետ շարունակական կապը պահպանելու միջոց:

Միգրանտը պատվիրում է հայրենիքում, օրինակ՝ բուսահավաքչությամբ զբաղվողներին վայրի ուտելի խոտաբույսերի որոշակի տեսականի հավաքել և պահեստավորել իր համար: Օրինակ՝ Շվանիձորում ականատես եղանք բոխու մեծ խմբաքանակի պահածոյացման գործընթացի, որով գյուղում ապրող շվանիձորցի ամուսինները զբաղվում են շուրջ 30 տարի: Ընդ որում՝ ամուսինը հավաքչությամբ է զբաղվում, կինը պահածոյացնում է: Ամուսինները հիմնականում աշխատում են հայաստանյան շուկայի պատվերով (Գորիս, Կապան, Երևան), բայց տարիներ առաջ հիսուն *բալոնով* (երեքլիտրանոց ապակյա տարա – Հ. Ա.) Մոսկվա են ուղարկել (Շվանիձոր, h/թ 220513-7a, b, կին, 55 տ., տղամարդ, 62 տ.):

Վերջին տարիներին արտերկրի գրեթե բոլոր հայաշատ համայնքներում գործում են Հայաստանից ավանդական մթերք և պատրաստի սնունդ ու իմիջք ներկրող և վաճառող կազմակերպություններ: Միաժամանակ Հայաստանում որոշ գյուղաբնակներ, տեսնելով տեղական սննդի մեծ պահանջարկը, ձեռնարկել են արտադրական գործընթաց: Առաջաձորում պատմեցին, որ տեղացիներից մեկը սեփական բիզնես է հիմնել. տեղական վայրի ուտելի բույսերը պահածոյացնում է կամ չորացնում և արտահանում. «*Առաջ, որ դեպի Երևան գնում էր Գորիսի ճամփով, տեղ մի հատ սեփական բան ունենք, բիզնես ունենք: Էդ մարդը անում ա* (խոսքը դաղձի օշարակի մասին է – Հ. Ա.), *անում ա, արտերկիր ա ուղարկում: Հիմնականում դաղձ ա, մոշ ա, ուրց ա, պահածոներ ա, իրա սեփական իրա այգին ունի, տենց անում ա, վաճառքի ա հանում: Բիզնես ա, էլի, անում*» (Անտառաշատ, h/թ 220709-2a, կին, 60 տ.):

Ուշագրավ է, որ մեքենայացված մեծածավալ կամ փոքրածավալ արտադրությունների կողքին նաև անհատներն են զբաղվում գյուղական ծագման սննդի վաճառքով. «*Իսկ իմ տղաս ասում ա, մա՛մա, ստեղ* (Մոսկվայում – Հ. Ա.), *... տոպրակներով առնում ա ընդեղ: Ասում ա մա՛մա, մեր շենքի մոտ կա, Ղարաբաղի՛ց են բերում, թե՛ որտեղից, սենց պակետներով*» (Ծավ, h/թ 220707-3a, կին, 71 տ.): Մեկ այլ զրուցակից հավաստեց, որ «*Ստեղից* (առհասարակ՝ Հայաստանից, տվյալ դեպքում՝ Սյունիքից) *գնացած բաները ավելի շատ են օգտագործում*» (Ծավ, h/թ 220707-3c, կին, 65 տ.):

Սյունիքի բնության բարիքների տարածումն օտար միջավայրում տեղի է ունենում նաև զբոսաշրջիկների կամ աշխատանքային այցով Հայաստանում (տվյալ դեպքում՝ Սյունիքում) գտնվող օտարերկրացիների միջոցով: Սննդամթերքը (վայրի ուտելի բույսեր և խոտաբույսեր, մուրաբաներ, ընկույզի շարոցներ, պաստեղներ, չորթան), ըմպելիքները (նաև ոգելից խմիչքը), մեղրի տեսականին արտերկրում ճանաչելի են դառնում զբոսաշրջիկների միջոցով, երբ

նրանք Հայաստան այցելելիս դրանցից գնում են և իրենց հետ տանում[13]: Ույծի զրուցակիցներից մեկը հավաստեց, որ ՌԴ-ից եկածները տանում են ուրց, մարիամախոտ, *ռամաշկա*[14] (Ույծ, h/թ 220710-2b, կին, 57 տ.):

Գորիսի տեղական սննդի կետերից մեկի սեփականատիրոջը, որ նաև խոհարարն էր, հարցրինք՝ արդյոք սննդի կետի այցելուները հետաքրքրվում են վայրի բույսերից ինչ-որ բան պատրաստելու բաղադրատոմսով, բանասացը պատասխանեց, որ տեղացի բոլոր այցելուները գիտեն պատրաստման եղանակը, սակայն զբոսաշրջիկները շատ հաճախ են հարցնում: Նրանք, սննդի կետում համտեսելով վայրի բույսից պատրաստված ավանդական ուտեստ, ճշտում են բաղադրատոմսը, տեղում գնում հումքը կամ պատրաստի ուտեստը (եթե, օրինակ, թթու դրած կամ պահածոյացված վիճակում է) և տանում. «*Շա՛ւր: Շա՛ւր: Ստեղ ուրրոները շատ են հարցնում՝ սա ո՞նց կեփես, սա ո՞նց եք անում, ի՞նչ եք անում: Դե, ասում եմ, բնականաբար: .... Հիմնականում տուրիստներ են, ռուսներ են, Մոսկվայից են շատ գալիս: Միրում են, ուրում են, էնպես չի, որ... .... Հիմնականում սպեցիֆիկ բաներ են ուզում: .... Մեկ էլ բանն են պահանջում՝ բաղադրատոմսը: .... Հետո գնում, փորձում են: Երբեմն, շատ ա եղել, որ զակատի ժամանակ էդ բանջարեղեն եմ զակատ անելուց էղել, հաճախորդներ են մտել, Ռուսաստանից ռուսներ են էղել, բան, նկարել են, բաղադրատոմսը ասել եմ, տարել են իրանց հետ արել են*» (Գորիս, h/թ 210805-1, կին, 48 տ.):

Գրանցել ենք դեպք, երբ այլազգի հյուրերը հաջորդ այցելությունից առաջ ճաշացանկը նախօրոք պատվիրել են. «*Օրինակ՝ ինձ մոտ որ գալիս են, ինձ մոտ հյուրեր եկել են բանից՝ Ամերիկայի դեսպանատունը Երևանում, Հայաստանի... դեսպանը (նկատի ունի ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին – Հ.Ա.) մեզ մոտ շատ ա այցելել, շատ՝ չորս անգամ: Ամեն այցելելուց էլ ինձ, խմիչքներ ա մեզ բերել նվերներ: Պահում ենք մինչ առ այսօր: Վերևում ա: Շատ լավ կին ա: Ամեն անգամ էլ ամուսինս թթի օղի ա տալիս, ուրախությունից գրկում ա մեզ: Մի տարի էլ քրոջ հետ էր եկել: Իսկ էս անգամ, որ եկան բանի, էս Սև լճի, որ եկել էին, գրավել էին, դեսպանատան աշխատողներն էին եկել, ինքը չէր եկել, նրանք էին եկել, ստեղ այցելել ու ասում էին ինձ՝ մեզ՝ լոբի: Իրանք մենյուն արդեն ինձ թելադրել էին, գիտեին՝ ինչ պիտի սարքենք: Ծնեփակ էի սարքել, թալ էի սարքել, չոր լոբի էի էփել, թեկուզ սեզոնը չէր, հուլիս ամսին*» (Գորիս, h/թ 210805-1, կին, 48 տ.):

2) Նոր միջավայրում ուտեստի և սննդամթերքի գաղթի ճանաչելիության հիմնական ուղիները

Վայրի ուտելի բույսերը և գյուղական արտադրության սննդամթերքը (նաև խմիչքներ և համեմունքներ, հաճախ պատրաստի ուտեստը) միգրանտի նոր երկրում ճանաչելի են դառնում տարբեր՝ դիպվածային կամ նպատակային

13 Hovsepyan et al. 2019, 23-34:

14 Ձեկուցման մեջ օգտագործում ենք բույսերի ոչ թե գրական անվանումները, այլ անվան այն տարբերակները, որոնք օգտագործել են մեր զրուցակիցները: Ոչ-գրական տարբերակները նշել ենք շեղատառ:

ուղիներով, որտեղ գրեթե միշտ առկա է ճաշելու և/կամ համտեսի գործոնը.

Հիմնական ուղիներից են *փոխադարձ այցելությունները և շփումները անհատների կամ ընտանիքների մակարդակով* (այլազգի հարևաններ, գործընկերներ ևն): Արտերկրում բնակվող սյունեցիները խոտաբույսերից պատրաստում են Սյունիքում ընդունված կերակրատեսակները, որոնք երբեմն հյուրասիրում են այլազգի ծանոթներին: Այսպիսով, տվյալ խոտաբույսը կամ ուտեստը նոր միջավայրում ճանաչելի է դառնում կամ տարածվում: Վերիշենում մի զրուցակից պատմեց, որ իրենց ընտանիքի ամերիկացի ծանոթներին թեյախոտեր են ուղարկում, իսկ վերջիններս էլ այդ խոտաբույսերից, որպես բուժամիջոց, ծանոթ-բարեկամներին են տալիս. «*Եթե ուզում են մեկին լավություն անեն, խուրերով չայ են տալիս*» (Վերիշեն, 210803-9a, կին, 65 տ.):

Լինում են դեպքեր, երբ միգրանտ հայն ապաստանած երկրում տեսնում է իրեն ծանոթ խոտաբույս, այն սկսում է օգտագործել՝ այդպիսով տվյալ երկրի բնակչին ճանաչելի դարձնելով այդ խոտաբույսը՝ որպես սնունդ կամ դեղամիջոց: Նմանատիպ դեպքի մասին մեզ պատմեց ՌԴ-ում ապրող քարահունջեցի մի կին, որը Պյատիգորսկի իր հարևանուհուն պատմել էր ավելուկի և նանայի՝ խոհարարության և ժողովրդական բժշկության մեջ օգտագործելու մասին. «*Մի անգամ գարնանը գյուս եմ եկալ* (Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքում – Հ. Ա.): *Դե, փողոցը լիքը ժանգյալ ա, էլ ավելուկ, էլ…: … Բացի իծիկոթից, մեկ էլ ինջլոգից, ամեն ինչը կա: Հավաքում եմ, մի հատ մի ութանասուն տարեկան կին ա (ռուս), իրանց հայաթում նստած ա: Ասում ա՝ հեմ ա, մեր հայաթում կա, արի, հավաքի»: Լավ էլ պյան կա՝ նյանյա: Նյանյան հունց սմ գրական: Մյուս-ն, էլի… … Ասում ա՝ էսի մեր հայաթում էլ կա, արի, հավաքի, էդ ավելուկը-պյանը: … Ես էլ իրան բացատրում եմ, որ էս ավելուկը փորացավին շատ օգտակար պյան ա: Էփյում եք, էն միջուկը քաղում եմ, սիրտորով պյան եմ սարքում: Ասում ա: «Эх вы, армяни, очень умные -, ասում ա, - делавые!», - ասում ա: Ես ինձ լավ զգացի, իհարկե: Որտև իրանք ոչ մի պյան կարում չեն անեն*» (Քարահունջ, հ/թ 210804-5c, կին, 65 տ.): Անտառաշատցի մի կին պատմեց, որ իր դուստրը, որն ապրել է Մոսկվայում և Չելյաբինսկում, ամեն անգամ քաղաքից դուրս գնալիս հավաքել և օգտագործել է իրեն ծանոթ խոտաբույսերը, որոնց օգտագործումը տվյալ բնակավայրերում ընդունված չի եղել: Ուստի տեսնողները զարմացել են (Անտառաշատ, հ/թ 220709-2a, կին, 60 տ.):

Միգրանտն արտերկրում իր ծագման երկրի ավանդական ուտեստը *ներկայացնում է կրթական կամ աշխատանքային միջավայրում և համայնքային միջոցառումների ժամանակ*: Բազմէթնիկ միջավայրերում կազմակերպվող մշակութային փառատոները բարենպաստ հարթակ են ազգային սննդի ներկայացման և ճանաչելի դարձնելու գործում: Օրինակ՝ Սիսիանից մի աշակերտուհի 2011-2012 թթ. ԱՄՆ-ում փոխանակման ծրագրով սովորելու տարիներին ներկայացրել է Սյունիքին բնորոշ ուտեստներ: Տարածված պրակտիկա է, երբ աշխատանքային միգրանտների ընդմիջումների ժամանակ տարբեր ազգերի ներկայացուցիչներ համատեղ ճաշում են և ծանոթանում մեկը մյուսի ազգային ուտեստներին:

Հատկապես աշխատանքային միգրանտների միջավայրում շատ տարած-

ված է տարբեր ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ օրվա ընթացքում համատեղ ճաշելու երևույթը: Օրինակ՝ հայ և ղազախ միգրանտների խմբերը, որոնք Ռուսաստանում համատեղ աշխատել են շինարարության ոլորտում և բնակվել կողք-կողքի, ամեն առավոտ և երեկո միասին են սնվել՝ ճաշակելով հայ խոհարարի պատրաստած կերակուրները: Արդյունքում ղազախներն ընտելացել են հայկական կերակուրներին, իսկ հայ խոհարարին սովորեցրել են իրենց բնորոշ բելյաշը, ռուսական ճաշերից էլ՝ *սալյամի*ով ճաշը և *սալյամի*ով բլինը[15]:

Ազգային սննդի կանոնավոր հանրայնացման և ճանաչելիության գործում կայուն դեր ունեն արտերկրում մշտական կամ երկարաժամկետ բնակություն հաստատած հայերի հիմնադրած սննդի կետերը, որոնք ներկայացնում են հայկական խոհանոցին բնորոշ կերակրատեսակներ: Մեզ հայտնի մի օրինակում ՌԴ-ում բնակվող տղամարդը (զրուցակցի եղբայրը) սննդի կետում է աշխատում և մշտապես խնդրում է, որ իրեն չորացրած *սամիթ*, *ծընթորան* և այլ համեմունքային կանաչեղեն ուղարկեն (Ծավ, հ/թ 220707-1a, կին, 38 տ.):

Հայաստանին բնորոշ ուտեստին ծանոթանալու ուրույն առիթ են համայնքային միջոցառումները: Հայտնի է, որ Սփյուռքի հայկական գաղթօջախներում, հայերից բացի, տվյալ երկրի էթնիկ բնակչությունը և այլազգիներ ևս հաճախ մասնակցում են հայ համայնքի միջոցառումներին: Օրինակ՝ Օմսկի մարզում տեղաբնիկները և Օմսկում ապրող մյուս ազգային փոքրամասնությունները հայերի հետ մասնակցում են Վարդավառի ջրցանությանը, մատաղի արարողությանը, հատկապես մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայկական ազգային ուտեստի նկատմամբ[16]:

Նոր երկրում միգրանտի համար ավանդական ուտեստի մասին գիտելիքի տարածումն առավել արտահայտված է լինում, եթե այնտեղ առկա է տվյալ հումքը (օրինակ՝ տեղացիների համար անծանոթ կամ ծանոթ, բայց չօգտագործվող վայրի բույսը):

3) Միգրացվող ուտեստի և սննդամթերքի տեսականին և հարակից այլ հարցեր

Տեղափոխվող սննդամթերքները մատնանշում են, թե միգրանտի բնօրրան երկրում օգտագործվող սննդից ինչը չկա ընդունող միջավայրում, որտեղ միգրանտը հանգրվանել է, և այդպիսով՝ տվյալ ուտեստը կամ համեմունքը ոչ միայն էթնիկ ինքնության դրսևորման միջոց, այլև էթնիկ ցուցիչ է դառնում: Հետևաբար՝ կարևոր է կազմել վայրի ուտելի խոտաբույսերի և գյուղական արտադրության սննդատեսակների այն ցանկը, որոնք միգրանտների շրջանում մեծ պահանջարկ ունեն: Ինչ վերաբերում է վայրի խոտաբույսերին, ապա դրանք ոչ միայն սննդի մեջ, այլև բուժական նպատակներով են օգտագործվում՝ այդպիսով ընդլայնելով էթնիկ ինքնության դրսևորման շրջանակները:

Թեմայի շրջանակում ուշագրավ են նաև այլ հարցեր. ինչ սննդամթերք,

15 Գալստյան 2023, 259:

16 Գալստյան 2023, 273:

ուտեստ, վայրի ուտելի բույսեր են տարվում արտերկիր, օգտագործման ինչ նպատակներով են տարվում, որ երկրներ են տարվում, ինչ ճանապարհներով և ինչ վիճակում են տարվում:

Վերը թվարկված տարբերակներով արտերկրում հայտնվում են վայրի ուտելի խոտաբույսերից հետևյալները. ավելուկ (*Rumex crispus*), սիբեխ (*Falcaria vulgaris*), մանդակ (*Astrodaucus* spp.), շուշան (*Chaerophyllum bulbosum*), փիփերթ (*Malva neglecta*, *M. sylvestris*, *M. pusilla*), սխտորի (*Allium* sp.), նաև ժենգյալով հացի մեջ օգտագործվող խոտաբույսերի սերմեր (օրինակ՝ կյարմանձուկի (*Anthriscus cerefolium*) սերմեր), թեյախոտերից՝ ուրց/*խոռնը* (*Thymus* spp.), նանա, *զվերաբոյ* (*Hypericum perforatum*, *H. linarioides*), *ռամաշկա* (Anthemideae gen. spp.), դաղձ (*Mentha longifolia*, *Mentha* spp.), *ղանթափա* (*Cephalaria gigantea*), *զիրա* (*Laser trilobum*), մարիամախոտ (*Teucrium polium*), չաման (*Carum carvi*), համեմունքներից՝ վայրի *ծնթորան* (*Satureja hortensis*), չաման, *խոռնը*, կիսաֆաբրիկատներից՝ *պըզկաթան*, խաշիլի հումք, ածիկ[17], թթուներից՝ բոխու (*Seseli hippomarathrum*) թթու, *ճըխթթո*, խնջլոզի (*Ornithogalum* spp.) թթու, քաղցրեղեններից՝ մեղր, դոշաբ (Քարահունջ, h/թ 210804-5c, կին, 65 տ.), մուրաբաներ, *կոնֆիտյոր* (Վերիշեն, h/թ 210803-9a, կին, 65 տ.): Տանում են նաև ընկույզի միջուկ (բուժական նպատակով, Քարահունջ, 210804-1+2a, կին, 74 տ.), սարի ծամոն, մասուր (*մահասոր*, *մըհասոր*, *Rosa* spp.), հավկիթ, տնական յուղ, բոխիով պանիր [նկ. 3], բանջարեղենային պահածոներ, թթի օղի և «առհասարակ՝ ամեն ինչ» (Վերիշեն, 210803-9b, կին, 38 տ.): Տանում են նաև մշակովի խոտաբույսեր՝ սամիթ, ռեհան, *ծնթորան* (ծոթրին, ռամարզա, ծիթրոն), սամիթ, *պեյրրուշկա*:

Զրուցակիցներից մեկը պատմեց. «*Խոռնը: Խոռնը, օրինակ՝ իմ թոռնիկս ընդեղ ա (հարսս ընդեղից ա), գրաս գարեկան ա հեսա: Զանգել ա՝ գրագիկ чебрец (ուրց – Հ.Ա.) ես բերում, ինքը ինձ գենց ա ասել ռուսերեն, հայերեն էլ ա գյում: Դե, հեյրո դոշաբին կիրովաբադցիները բեքմեզ են ասում, հարսս կիրովաբադցի ա, բեքմեզ ես բերում [նկ. 4], թան ես բերում: ... Պըզկաթան, էս թանը, բըզկաթան: ... Զորրորդը չեմ հիշում՝ որն էր: Դե, թան, մեկ էլ ռեզինի կանֆետներ ա ուզալ, էդ հեչ, հայկական, ինքը շատ ա սիրում*» (Քարահունջ, h/թ 210804-5c, կին, 65 տ.):

Վայրի բույսերն օգտագործման լայն շրջանակ ունեն՝ որպես սնունդ, բուժամիջոց, ներկանյութ, կենցաղային օգտագործում ևն, սակայն «միգրացվող» բույսերը հիմնականում տարվում են որպես ուտեստ, թեյաբույսեր և դեղաբույս:

Միգրացիոն ուղղությունների քարտեզագրման համար ուշագրավ և ուրույն ցուցիչ են վայրի ուտելի խոտաբույսերի և սննդատեսակների *միգրացիայի երկրները*: Ըստ մեր գրանցած նյութերի՝ վայրի ուտելի բույսերը և գյուղական արտադրության սնունդը հիմնականում տարվում են ՌԴ և ԱՄՆ (օրինակ՝ Ծղուկ, h/թ 210803-2, կին, 65 տ., Վերիշեն, h/թ 210803-9a, կին, 65 տ., Բոնակոթ,

17 Пшеничный джем՝ ռուսների բնորոշմամբ, Դավիթ Բեկ, 220708-6, տղամարդ, 71 տ.:

h/թ 210806-5a, կին, 72 տ.): Այս շարժընթացը բացատրվում է նրանով, որ հայկական Սփյուռքի երկու ամենախոշոր համայնքներն այդ երկրներում են: Սակայն տանում են նաև այլ, օրինակ՝ Եվրոմիության երկրներ (Ծղուկ, h/թ 210803-2, կին, 65 տ.):

Վայրի ուրելի բույսերը, սնդամթերքը և ուրեպտը տանում են թե՛ *օդային*, թե՛ *ցամաքային ճանապարհներով*: Օրինակ՝ Իսպանիայից ցամաքային ճանապարհով՝ մեքենայով Հայաստան եկած հայերը Սյունիք այցելության ժամանակ Երևան-Սիսիան ավտոմայրուղու՝ Ծղուկ գյուղի հատվածում բույսերի վաճառքով զբաղվող գյուղացուց գնել են տարատեսակ վայրի խոտաբույսեր [նկ. 5] Իսպանիա տանելու նպատակով (Ծղուկ, 210803-2, կին, 65 տ.): Լինում են դեպքեր, երբ օտարերկրացիները կամ անցակետերի աշխատակիցները կասկածանքով են մոտենում ուտելի խոտաբույսերին՝ կարծելով, թե դրանք թմրամիջոցներ կարող են լինել. «*Չէ, արտասահմանից գալիս են, հոտ են քաշում, էդ պարսիկներն էլ գալիս են, ասում ա՝ ծխում ենք, ասում եմ՝ չէ, ուտում են: Ասում են՝ ոնց: Ասում եմ, ռուսերեն հասկացնում եմ, որ էփում են, ուտում են: Թողում են, էթում են պարսիկները: Քանի՛-քանի՛ անգամ են էկել, հարցրել, ասում ա՝ հա՛, ծխում ենք*» (Ծղուկ, h/թ 210803-2, կին, 65 տ.): Լոս-Անջելեսում բնակվող մի կին, որ կյանքի մեծ մասն ապրել էր Սիսիանում, ցանկանում էր հնարավորության դեպքում սարի ծամոն տանել և տանելու տարբերակ էր քննարկում: Երբ հարցրինք, թե ինչպես պիտի առանց հեղուկ զանգվածի մեջ դնելու տեղափոխի, ասաց, որ պոլիէթիլենային տոպրակների մեջ դրած հնարավոր է տանել, ապա ավելացրեց, որ «*կարող ա էդ տամոժնին ուրիշ բան կասկածի*»: Իսկ եթե կասկածի ու տոպրակը բացի, ապա «*մեկի հետ միաժամանակ մի քանի բաներ հանելու ա, [եթե] դնես ձեռքի սումկեն*» (Սիսիան, 210808-1b, կին, 70 տ.): Զրուցակիցներից մեկը պատմեց, որ տարիներ առաջ Աշխաբադ մեկնող ավտոբուսով դստեր համար մի քանի անգամ կապոց է ուղարկել, բայց Իրանի անցակետում թույլ չեն տվել ավելուկն անցկացնել՝ կասկածելով, որ թմրամիջոց է (Ակներ, h/թ 220517-7a, կին, 74 տ.): Մեկ այլ զրուցակից պատմեց, որ բույսի գրական անունն ասելու դեպքում հնարավոր է անցակետերում խնդիրներ չառաջանան, և թույլատրվի փոխադրել. «*Ռուսաստանից որ մեր բարեկամները կյամ են, առաջին գործը էյվյելուկն ա մեկ էլ խոտաբույսերը՝ խոռնը, չամանը: Ամեն ինչ էլ տանում են, էնքան որ բագաժի մեջը տեղ կանի: Էնքան որ գյուղից լինի*» (Քարաշեն h/թ 210805-2e, կին, 24 տ.): «*Էդ էլ փոնում են ճամփին: Գյում են, թա օրիշ պյան ա չորացրած: Պիտի գրական անունը իմանաս, որ կարաս անցկացնես տամոժնին, թե չէ, չես կարա*» (Քարաշեն, h/թ 210805–2a, տղամարդ, 59 տ.):

Ուշագրավ է, որ բույսեր հիմնականում գնում են Հայաստանի և արտերկրի հայերը, ինչպես նաև ռուսներ, որոնք դեղաբույսեր են գնում և տեղափոխում ՌԴ և այլ երկրներ, որտեղ նրանք ապրում են: Մինչդեռ օտարերկրացիները՝ հատկապես ԵՄ-ից, ԱՄՆ-ից և Կանադայից, մտավախություն են ունենում մաքսակետերում խնդիրների հնարավոր առաջացումից և վարանում են դեղաբույսեր գնել: Իհարկե, վաճառողներն այս խնդրի կարգավորման տարբե-

րակները գտել են: Նման դեպքերում փորձում են բույսի մասին տեղեկատվությունը գրքային տվյալներով հիմնավորել՝ գնորդին տեղում ցույց տալով գրքի համապատասխան հատվածը, և ասում են բույսի ոչ միայն հայերեն, այլև անգլերեն և ռուսերեն անվանումները: Տարիների փորձի ընթացքում խոտաբույսերի վաճառքով զբաղվողները քաջածանոթ են դեղաբույսերի վերաբերյալ լայն ճանաչում ունեցող մի քանի գրքերի, որոնք մշտապես նրանց մոտ են լինում և կիրառվում են օտարերկրացիների հետ աշխատելիս[18]:

Արտերկիր տեղափոխում են ինչպես *չորացված*, այնպես էլ *պահածոյացված*, *թթու դրած*, *մարինացված* վիճակում, իսկ որոշ մթերքներ՝ *կիսաֆաբրիկատ* վիճակում՝ որպես հումք:

Սույն նախնական հետազոտությունը ևս մեկ համալրում է այն ուսումնասիրություններին, որոնք նվիրված են ուտեստը որպես էթնիկ ինքնության դրսևորման միջոց լինելու երևույթին: Մեր հետազոտության մեջ հիշատակված միգրանտները հիմնականում աշխատանքի նպատակով էին տեղափոխվել արտերկիր և շարունակում էին ծագման երկրի հետ կապը պահել ոչ միայն հարազատների հետ սերտ շփման, ժամանակ առ ժամանակ հայրենիք այցելելու միջոցներով, այլև հայրենի բնակավայրի ուտեստն ընդունող երկիր տանելով կամ հայրենիքում սիրված և ընդունված սննդատեսակներն այնտեղ փնտրելով: Ասվածի ամբողջական պատկերն ընդհանրացվում է ընտանիքով ՌԴ տեղափոխված վերիշենցի մի երիտասարդ կնոջ մեկնաբանմամբ, որը հավաստեց, որ իր հետ տանում է գյուղական ծագման հնարավոր ամեն սննդատեսակ. «*Ինչ հայկական ա, առաջի տեղը: Մեր ամեն ինչը շատ համով ա*» (Վերիշեն, 210803-9b, կին, 38 տ.): Հարցին՝ արդյո՞ք գնալ-գալու ընթացքում կանաչեղեն տանում եք, թե՞ ոչ, ընտանիքի անդամներից մեկը պատասխանեց. «*Տանո՞ւմ են… Կրում են, Է՛, չեն տանում*» (Վերիշեն, 210803-9c, կին, 37 տ.):

Ամփոփում

Միգրանտների շրջանում ծագման երկրի գյուղական սննդամթերքը, դրանով պատրաստվող ուտեստը և վայրի ուտելի բույսերը մեծ պահանջարկ ունեն: Միգրանտն ընդունող երկրում կարողանում է դրանք ունենալ ուղղակի (իր հետ տանելով) կամ միջնորդավորված ձևով (որպես առաքանի՝ ստանալով հարազատներից, բուսահավաքչությամբ զբաղվողից ևն)՝ ստանալով օդային և/կամ ցամաքային ճանապարհներով: Հայրենիքից ուղարկված բարիքների շարքում հատկապես մեծ պահանջարկ են վայելում վայրի ուտելի խոտաբույսերը և թեյախոտերը, որոնք օգտագործվում են նաև որպես բուժամիջոց, ինչպես նաև կիսաֆաբրիկատ սնունդը: Ծագման երկրի սննդամթերքը և ուտեստը միգրանտի հանգրվանած երկրում ճանաչելի են դառնում անձնական միջավայրում՝ ընտանեկան, դրացիական, իսկ հանրային միջավայրերում՝ կրթական և աշխատանքային փոխշփումների շնորհիվ և էթնիկ սնունդ մատուցող խանութների և հանրային սննդի կետերի միջոցով:

Այսպիսով, միգրացիայի (գաղթի) շրջապտույտում երկու գործընթաց է

18 Տես Hovsepyan et al. 2019, 32-33.

տեղի ունենում. առաջին՝ ուտեստի էթնոմշակութային գործառույթն իրականանում է միգրանտի և ընտանիքի կապի պահպանմամբ և օտար միջավայրում էթնիկ ինքնության դրսևորմամբ, երկրորդ՝ միգրանտի ավանդական ուտեստը ևս «գաղթում է»՝ նոր միջավայրում ճանաչելի դառնալով:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

գ.	գյուղ
խ/հ	խոշորացված համայնք
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք.	քաղաք

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՍՏՅԱՆ 2023
Գալստյան Մ.Հ., Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում, Երևան, 2023:

ԾԱՏՈՒՐՅԱՆ 2007
Ծատուրյան Ռ.Ա., Ուտեստի համակարգը՝ որպես ենթաէթնիկ խմբերի ինքնության դրսևորում (ՀՀ տեղափոխված իրանահայերի օրինակով) // Հայ ազգագրության և հնագիտության խնդիրներ, 3, Երևան, «Գիտություն», 2007, էջ 174-180:

ԾԱՏՈՒՐՅԱՆ 2010
Ծատուրյան Ռ.Ա., Ճամփորդող ինքնություն. ուտեստը ուղեբեռներում // Հաբիտուս. մարդաբանական և հնագիտական ուսումնասիրություններ, 1, Երևան, 2014, 20-29:

ԾԱՏՈՒՐՅԱՆ, ՀՈՎՍԵՓՅԱՆ 2021
Ծատուրյան Ռ.Ա., Հովսեփյան Ռ.Ա., «Ժենգյալով հացը» 2020 թ. Արցախյան պատերազմի օրերին // Լրաբեր հասարակական գիտությունների, 2021, 2 (662), 305-326:

ЦАТУРЯН 2015
Цатурян Р.А., Кочующее «Мы»: продукты питания в посылках для мигрантов, Диаспоры // Независимый научный журнал, 2015, 1-2, 113-134.

TSATURYAN 2015
Tsaturyan R.A., The tastes and smelles of Armenianness, Armenianness every day: from above to below…, Yerevan – 2015, 142-172.

HANAZAKI et al. 2023
Hanazaki, N., Pieroni, A., Ludwinsky, R.H., Gonçalves, M.C., Prakofjewa, J., Peroni, N., Soukand, R. People's migrations and plants for food: a review for fostering sustainability // Sustain Earth Reviews, 2023, 6, article 9.

HOVSEPYAN et al. 2016
Hovsepyan R.A., Stepanyan-Gandilyan N., Melkumyan H., Harutyunyan L., Food as a marker of economy and part of identity: traditional vegetal food of Yezidis and Kurds in Armenia // Journal of Ethnic Foods, 2016, Volume 3, Issue 1, 32-41.

HOVSEPYAN et al. 2019
Hovsepyan R.A., Stepanyan-Gandilyan N., Stollberg C., Phytomedicinal knowledge and “official” sources in Tatev (Armenia) // Ethnobiology Letters, 2019, Volume 10, Issue 1, 23-34.

Hasmik A. Abrahamyan, *Ph.D.*
Institute Archaeology and Ethnography, Armenia, Research fellow

Roman A. Hovsepyan, *Ph.D.*
Institute Archaeology and Ethnography, Armenia,
Head of the Archaeobiology and Ethnobiology research group

THE ETHNO-CULTURAL ROLE OF FOOD IN THE CYRCLE OF MIGRATION (Preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia)

Keywords: Syunik, wild edible plants, dish, food, migration, ethnocultural, ethnic identity.

Migration, being a multi-component process, is a factor in the export and spread of ethnic cultural elements. In this preliminary study, as a novelty, the migration of local food, raw materials and wild edible plants is presented with the study at fifteen settlements in Syunik, Armenia. In the course of the research, several ways of transportation of plants, agricultural products, processed foods and raw materials to the destination of the migrant's settling place were documented: 1) a migrant from Syunik who moved abroad takes goods from Armenia with him when visits his homeland, 2) those living in Syunik send goods to their relatives who moved abroad, 3) family members or relatives living in Syunik take goods with them when visit migrants abroad, 4) migrants order goods and buy from people in Syunik engaged in plant-gathering and trage of local goods, 5) organizations engaged in import and sale of goods from Armenia are being open in the largest Armenian communities abroad, 6) foreign tourists or businessmen visiting Armenia take goods with them to abroad.

The main ways in which wild plants and agrarian products (including beverages and flavorings, often also ready dishes) are becoming known at the new country of migrant are highlighted. These are mutual visits and interactions of individuals and families (foreign neigbors, colleagues, etc.) and introduction of the traditional food of migrant’s country of origin at the educational, work or community events of the host country.

Culinary plants, flavoring plants, and a number of plants used as tea herbs are taken from wild plants and farm products, the main of which are sorrel, sickleweed, chervil, thyme, mint, wild savory, and cumin. Amongst almost ready dishes, they take pezkathan, raw materials of khashil, from pickles – pickled bokhi, chekhthetho. They also take honey, doshab, jams, walnut, rosehip, cheese with bokhi, mulberry vodka, etc. Some foods, flavorings and teas are also used for medicinal purposes. The main directions of transportation of food products and other wild plants are the countries with the largest Armenian communities: the Russian Federation, the USA and the EU countries.

Thus, the ethno-cultural function of the food in the process of migration is realized by maintaining the connection between the migrant and its family and the manifestation of ethnic identity in a foreign environment, and the traditional dish of the migrant's country of origin also "migrates" and becomes recognizable in the new environment.

Асмик Абеловна Абрамян, *к.и.н.*
Институт археологии и этнографии РА, научный сотрудник

Роман Агасиевич Овсепян, *к.б.н.*
Институт археологии и этнографии РА,
Руководитель исследовательской группы археобиологии и этнобиологии

ЭТНОКУЛЬТУРНАЯ РОЛЬ ПИЩИ В КРУГОВОРОТЕ МИГРАЦИИ (по материалам Сюникской области)

Ключевые слова: Сюник, дикорастущие съедобные растения, еда, продукты питания, миграция, этнокультурный, этническая идентичность.

Миграция, будучи многокомпонентным процессом, является фактором экспорта и распространения элементов этнической культуры. В этом предварительном исследовании, в качестве новинки, на примере пятнадцати населенных пунктах Сюника (Армения), представлена миграция местных продуктов питания, сырья и диких съедобных растений. В ходе исследования было определено несколько способов транспортировки растений, сельскохозяйственной продукции, пищевых продуктов и сырья в стране расселения мигранта: 1) Мигрант, в последующем посещении родины, берет с собой продукты питания, напитки и приправы; 2) родные, проживающие в Сюнике, отправляют товары своим родственникам, выехавшим за границу; 3) друзья и родственники, при посещени мигранта живущего заграницей, берут с собой вышеуказанные продукты; 4) Мигрант заказывает вышеуказаные продукты людям, которые на родине занимаются сбором растений; 5) в общинах, с преобладающим армянским населением, открываются организации, занимающиеся импортом и продажей традиционных продуктов питания и напитков; 6) туристы или иностранцы, находящиеся с деловым визитом в Армении, берут их с собой.

Выделены основные пути распространения дикорастущих растений и аграрной продукции (в том числе напитков и ароматизаторов, а зачастую и готовых блюд) в новой стране мигранта: это взаимные визиты и взаимодействие отдельных лиц и семей (иностранных соседей, коллег и т.п.) и внедрение традиционных блюд страны происхождения мигранта на образовательных, рабочих или общественных мероприятиях принимающей страны.

Из дикорастущих растений и сельскохозяйственных продуктов мигранты берут собой или отправляют мигранту кулинарные, ароматические растения и ряд растений, используемые в качестве чайных трав, основные из которых - щавель, бутень, кервель, чабрец, мята, чабер дикий, тмин. сырье мучной каши (хашил), из солений – маринованные бохи, чехтето (из стебели свекла). Отправляют также мед, дошаб (тутовый сироп), джемы, орехи, шиповник, сыр с бохи, тутовую водку и т. д. В лечебных целях применяют также некоторые продукты, ароматизаторы и чаи.

Основными направлениями перевозки пищевых продуктов и других дикорастущих растений являются страны с крупнейшими армянскими общинами: Российская Федерация, США и страны Евросоюза.

Таким образом, этнокультурная функция еды в процессе миграции реализуется путем поддержания связи мигранта с его семьей и проявлением этнической идентичности в чужой среде. Традиционные же блюда (страны происхождения мигранта) «мигрируют» и становятся узнаваемым в новой среде.

Ներկայացվել է՝ 21.02.2024
գրախոսվել է՝ 04.07.2024
ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Աբելի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasce@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատուրյան Նելլի Ռաֆիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի
պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու
կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի
ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan
To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan
The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan
Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan
Main issues of armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan
"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan
Authencity discurse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan
Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan
Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush
Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan
Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan
Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan
Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cyrcle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan
The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan
Perceptions of homeland in the armeniam community of Los Angeles 204

Nelli Khachaturyan
Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan
Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян
Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян
Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян
Армения в восприятиях российских иммигрантов 37

Сюзанна Барсегян
Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян
“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян
Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян
Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджанян
Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш
Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян
Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян
Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян
Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДИАСПОРЫ

Рубен Карапетян
Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян
Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян
Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсиме Асатрян
Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ 248

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ 263

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփելյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Արփինե Բեգլարյան» ԱՁ տպարանում
հեռ. 043 107 090
Beglaryanprint@mail.ru

ՀԱԻԱ 6